№ 142 Օգոստոսի 15 (27) 1880 Օգոստոսի 15 (27) № 142

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարքաղաքացիք գրվում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աղքատներ և հարուստներ.— Ներքին տեսութիւն. Մանկավարժական ժողով. Նամակ Շամախուց. Նամակ Իգդիրից. Նամակ Նոր-Բայազէդից. Նամակ Ղուբայից. Նամակ Նուխուց. Նամակ Խմբագրին.—Արտաքին տեսութիւն. Անգլիա. Արևելեան գործերը. Ալբանական շարժումը.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.

ԱՂՔԱՏՆԵՐ ԵՒ ՀԱՐՈՒՍՏՆԵՐ

Երբ որ մենք խօսում էինք, մի քանի ժամանակ առաջ, այն բանի վրա թէ մեր կանայք և օրիորդներ շատ լաւ կանէին բժշկութիւն սովորելու, մենք յայտնում էինք այն միտքը, որ գոնէ Ռուսաստանի մայրաքաղաքներում ապրող հայ հարուստ ընտանիքների օրիորդները մտնէին կանանց համար Ս. Պետերբուրգում հիմնված բժշկական բարձրագոյն դպրոցը:

Նոյնը կարող ենք ասել և Թիֆլիսի հարուստ հայ ընտանիքների մասին: Բայց դժբաղդաբար մեր հարուստները բոլորովին անտարբեր են դէպի որ և է առաջադիմական շարժում իրանց ազգի մէջ:

Այդ դեռ բաւական չէ: Մեր հարուստը մի կողմից արժանաւորութենից ստոր է համարում իր աղջկան ուղարկել բժշկական բարձրագոյն դպրոցը, բժշկական ուսումը սովորելու համար, իսկ միւս կողմից, երբ իր հայրենակիցների շրջանում գտնվում է մի աղքատ օրիորդ, որ ցանկանում է բժշկութիւն սովորել, բայց նիւթական միջոցներ չունի, մեր հարուստ հայը նրան էլ չի օգնի իր նիւթական միջոցներով:

Այդպիսով մեր հարուստները համ՝ իրանք ոչինչ չեն անում մտաւոր առաջադիմութեանը իրանց սեփական շրջանի մէջ նպաստելու համար, համ էլ օգնութեան ձեռք չեն մեկնում իրանց ազգի չքաւոր շրջանից դուրս եկած անձների առաջադիմական ձգտումներին նպաստելու համար:

Այդ գիտէ՞ք, ինչին նման է: Մի մարդ գեղեցիկ կերակուր ունենայ իր սեղանի վրա դրված, բայց ոչ ինքն այդ կերակուրից ուտի, որովհետև կուշտ է, ոչ էլ ուրիշին տայ այդ կերակուրից ուտելու....

Իսկ ահա, երբ մի չքաւոր հայ օրիորդ, ինչպէս յայտնեցինք մեր երէկվայ համարում, գովելի ցանկութիւն ունի բժշկական ուսում ստանալու, նա իր ընկերուհիների հետ պէտք է հազար ու մի չարչարանքով մի քիչ փող հաւաքի, կամ ստորագրութիւն բանալով, կամ կօնցերտ ու ներկայացումն տալով, աղաչանքով պաղատանքով մեր հարուստներից սրան նրան տոմսակներ ծախի, որոնց մեծ մասամբ արհամարհանքով վերադարձնում է հարուստ հայը:

Այդպիսով մեր հասարակութեան հարուստ և աղքատ դասակարգերի մէջ ոչինչ բարոյական համերաշխութիւն չը կայ, կարծես թէ նրանք երկու միմեանց հակառակ բանակներ են, երկու տարբեր ազգութիւններ են:

Այն ինչ, որքան աւելի առաջադէմ կը լինէր մեր ազգութիւնը, եթէ մեր այդ երկու դասակարգերը միմեանց փոխադարձապէս օգնէին:

Դիմում ենք մեր հայ օրիորդներին և տիկիններին և աղաչում ենք նրանց, թողնել իրանց անտարբեր, անգործ, շռայլ կեանքը, մտածել վերջապէս իրանց չքաւոր քոյրերի մասին, որոնք ուսման ծարաւ ունեն և ազգի ընդհանուր առաջադիմութիւնը աչքի առջև ունենալով, հիմնել իրանց մէջ մի հաստատ ընկերութիւն՝ կանանց լուսաւորութեան գործին նպաստելու համար:

Դորանով նրանք կազատեն իրանց չքաւոր և աշխատասէր քոյրերին հազար և մի չարչարանքից պատիվը ստորացնող բաստորագրութիւններ անելու կամ անաջող ներկայացումներ տալու, այլ կունենան մի հաստատ դրամագլուխ, որի տոկոսներով տարին գոնէ երկու, երեք սանուհիներ կարող են պահել բարձրագոյն թէ այլ դպրոցներում:

Ժամանակ է, աշխատել վերականգնեցնել բարոյական համերաշխութեան կապը մեր աղքատ և հարուստ դասակարգերի մէջ, աչքի առջև ունենալով ազգի ընդհանուր բարոյական շահերը:

Իսկ այդ գործին ձեռնամուխ լինելը կարող են միմիայն մեր հարուստ դասակարգի կանայք և օրիորդներ, նրանցից ենք սպասում մենք այդ ազգաշահ գործի իրագործումը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Զգալով հայոց դպրոցների ընդհանուր բարեկարգութեան կարևորութիւնը, 1880 թուականի օգոստոսի 6-ին հետևեալ անձինք՝ արժ. հայր Ստեփաննոս Տէր-Ստեփանեանց, մեծ. օր. Գայանէ Յովհաննիսեանց, և. պ. պ. Գէորգ Բարխուդարեանց, Աբիսողոմ Յովհաննիսեանց, Նիկողայոս Խոսրովեանց, Ռափայէլ Պատկանեանց, Նիկողայոս Տէր-Ղևոնդեանց, Մկրտիչ Անանեանց, Դաւիթ Քաղանթարեանց, Յովհաննէս Նազարեանց, Ամիրան Մանդինեանց, Գրիգոր Շահբուդաղեանց, Նիկողայոս Նաւասարդեանց, Պօղոս Քաթանեանց, Աշոտ Թէմուրազեանց, Միհրան Բաղդասարեանց, Կարապետ Եղիշանեանց, Սարգիս Աւալեանց, Սարգիս Աստուածատրեանց և Պօղոս Սահակեանց ժողովեցան Թիֆլիսի Ս. Գայեանեան օրիորդական դպրոցը, որ համաձայն Վեհափառ Կաթողիկոսի կանոնադրութեան, որ տրված է թեմական վերատեսուչներին ուսուցչական ժողովներ կազմելու մասին՝ խորհրդակցելով միմեանց հետ, որոշեցին, որ առաջիկայ 1881 թուականի ամառային արձակուրդին բոլոր հայոց դպրոցների թեմական վերատեսուչները, տեսուչները և ուսուցիչները՝ Վրաստանի և Իմերէթի թեմական վերատեսչի հրաւիրանօք ժողովվին Թիֆլիսում իբրև կենտրոնական քաղաքում և ընդհանուր ոյժերով մշակեն այդ ծանրակշիռ հարցը:

Վերոյիշեալ անձինքներից բաղկացած խորհուրդը որոշեց կազմել Թիֆլիսում երկու յանձնաժողով մին տնտեսական, միւսն ուսումնական, որոնց գործը պէտք է լինի առաջիկայ ընդհանուր ուսուցչական ժողովի համար ներկայ տարվայ ընթացքում նախապատրաստութիւններով զբաղվել:

Ժողովը հարկաւոր դատեց այժմէն իսկ տալ այդ յանձնաժողովներին հետևեալ ծրագիրները:

Ա. Տնտեսական յանձնաժողովի պարտամունքը լինելու է:

1. Յիշեալ ընդհանուր ուսումնական ժողովի համար ճանապարհածախս, բնակարան և սնունդ հայթայթել:

2. Պատրաստել ուսումնական պիտոյքներ ըստ առաջարկութեան ուսումնական յանձնաժողովի:

Բ. Ուսումնական յանձնաժողովի պարտամունքը լինելու է:

1. Պատրաստել մի ծրագիր ընդհանուր ժողովի պարապմանց համար:

2. Կազմել մի օրինակելի դպրոց:

3. Որոշել այդ դպրոցի համար ուսումնական պիտոյքների ցուցակ տնտեսական յանձնաժողովին առաջարկելու:

4. Պատրաստել ընդհանուր ծրագիր ծխական և միջնակարգ դպրոցների համար՝ ընդհանուր ժողովի քննադատութեանը առաջարկելու:

5. Որոշել ընդհանուր հարցեր թեմական վերատեսուչներին հաղորդելու, որպէս զի մշակվեն իւրաքանչիւր թեմի դպրոցների մանկավարժական ժողովներում:

6. Հրաւիրել մասնագէտ անձինք՝ թէ մանկավարժութեան և թէ՛ գիտութեան այլ և այլ ճիւղերի վրա դասախօսելու նպատակով:

7. Առաջարկել թեմական վերատեսուչներին, որ իրանց թեմերի դպրոցների մանկավարժական խորհուրդի ընդհանուր հարցերին վերաբերեալ արձանագրութիւնները ներկայացնեն ընդհանուր ժողովին:

Վերոյիշեալ անձինքներից բաղկացած ժողովը յանձնեց Վրաստանի և Իմերէթի վերատեսչին՝ մեծ. պ. Գէորգ Բարխուդարեանին իր ընտրութեամբ կազմել Թիֆլիսում յիշեալ տնտեսական և ուսումնական յանձնաժողովները:

Ա.

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

20 յուլիսի

Շամախեցիները իրանց անտարբերութեամբ դէպի տաճկաց Հայաստանի մեր թշուառ եղբայրները ցոյց տուին իրանց սառնասրտութիւնը, նաև արհամարհանքը դէպի ընդհանուր ազգային գործը: Եթէ կասեն՝ մենք էլ 111 րուբլի ժողովեցինք՝ այդ մասին կարող եմ պատասխանել. «Համեմատելով 800 տուն լուսաւորչականների տուածը (111 ր.), մի հարիւր տուն աւետարանական հայերի տուածի հետ (115 ր., և 62 րուբլի) շատ աննշան է»: Բացի այդ, լուսաւորչականների տուածը եղել է երկու նպատակի համար, մէկը «Արարատեան ընկերութեան» և միւսը վանի սովելոց: Այդ ժողովածն էլ եղել է շնորհիւ մի օտարական ուսուցչի, որը ընկած խանութները հազար ու մէկ կծու խօսքեր լսելուց յետոյ կարողացել է ժողովել յիշեալ գումարը. այն էլ 10 րուբլու չափ դարձեալ աւետարանականներից:

Երբ աւետարանական հայերը, որոնց մեր լուսաւորչականները «լեմսայ» են ասում և չեն էլ ուզում հայ անուանել, խումբ բազմութեամբ յաճախում էին ժողովարան, ուր՝ լսելով Հայաստանի թշուառ դրութեան վրա քարոզը, շտապում էին լցնել սովելոց համար նշանակված դրամարկղը իրանց 'ի սրտէ բղխած ողորմութեան տուրքով,— մեր լուսաւորչականները վաղ առաւօտից իրանց թէյն խմելուց շտապում էին իրանց խանութները առուտուրը շարունակելու, թողնելով եկեղեցում երկու քահանայ և մէկ եպիսկոպոս չորս պատի մէջ իրանց ժամերգութիւնը կատարելիս: Զարմանալի է սրանց (ժողովրդեան) սառնասրտութիւնը դէպի եկեղեցին և կրօնը. ամբողջ տարին եկեղեցին դատարկ է լինում. եթէ մէկին հարցնում ես «ինչու եկեղեցի չէք գնում», պատասխանում է «ինչ կայ եկեղեցում, մի քարոզող կա՞յ, որ գնանք լսելու: Այնքան «խոնարհեցի»—«Ապրեցի» ենք լսել, որ ինքներս անգիր ենք արել»: Բայց եթէ հոգևորականին ես դառնում, թէ «ինչու քարոզ չէք ասում եկեղեցում», պատասխանում է. «ում ասենք քարոզը, պատերին ասենք երբ եկեղեցին այցելող